ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 187-Ա 18 մարտի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 702-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի, 37-րդ հոդվածի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 20-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 991-Ն և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2022 մարտի 18 -ի N 184-Ա որոշումները

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է ընկերության կողմից տեղաբաշխված թվով 2539 /երկու հազար հինգ հարյուր երեսունիններ/ հատ 8860 /ութ հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/

անվանական բաժնետոմսերը փոխարկվում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 1382 /մեկ հազար երեք հարյուր ութսուներկու/ հատ 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և տեղաբաշխման արդյունքում ձևավորված կանոնադրական կապիտալի մեծությունը կազմում է 94.990.000 /իննսուն չորս միլիոն ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ, որը կազմում է 9499 /ինը հազար չորս հարյուր իննսունինը/ հատ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսեր:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակն է բժշկական օգնության և սպասարկման /հիվանդանոցային, արտահիվանդանոցային, շտապ բուժօգնություն և այլն/ կազմակերպումը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Կանոնադրություն 1.1 կետը լրացնել նոր պարբերությամբ՝

<<1.1 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը /գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 03.12.1996թ., վերակազմավորման գրանցման օրը 30.07.1998թ., գրանցման N 58.140.00142, ՀՎՀՀ՝ 08802975, վկայականը 01Ա 030047, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս Լեռնագործների 6/ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 991-Ն որոշման համաձայն՝ միացման ձևով վերակազմակերպվել է միանալով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերությանը /գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 03.12.1996թ., վերակազմավորման գրանցման օրը 23.09.1998թ, գրանցման N 37228583, ՀՎՀՀ՝ 08803091, վկայական՝ 01Ա 030046, գտնվելու վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Բարեկամության 23/ և միացման ձևով վերակազմակերպումից հետո Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան>>:

2) Կանոնադրության 2.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<2.2.Ընկերության ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակն է բուժօգնությունը և սպասարկումը: Նշված գործունեությունը ներառում է՝ Հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապ բուժօգնության ծառայություն>>:

3) Կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
<<4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 94.990.000 /իննսուն չորս միլիոն ինը հարյուր իննսուն հազար/ դրամ, որը կազմում է 9499 / ինը հազար չորս հարյուր իննսունինը/ հատ 10.000 /տաս հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 9499 /ինը հազար չորս հարյուր իննսունինը/ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ /սովորական/ են>>:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար Շահեն Շահինյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին և տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 1999 թվականի սեպտեմբերի 2-ի N 80 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 702- Ա որոշումը:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Լուսինե Վարդանյանին:

18.03.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ